## Լ Ր Ա Ց ՈՒ Ց Ի Չ   Օ Ր Ա Կ Ա Ր Գ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նիստի (№ 2)**

17 փետրվարի 2017թ. — ժամը՝ 16[00]

1. «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութի շրջանի Քյուրաթաղ գյուղի համայնքային կենտրոնի և 150 տեղանոց հանդիսությունների տան կահավորում» ծրագրի մասին:
(Արմինե Դարբինյան)

2. Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գրքերի բաշխում» ծրագրի մասին:
(Արթուր Տեր-Սիմոնյան)

3. «Դիլիջան Դեվելոփմենթ» հիմնադրամի կողմից իրականացվող «Դիլիջան համայնքում եկեղեցական համալիրի կառուցում» ծրագրի մասին:
(Արա Ախոյան)

4. «Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Մանկական խաղահրապարակներ Սպիտակ քաղաքում և Այգեպար գյուղում» ծրագրի մասին:
(Անահիտ Քալանթարյան)

5. «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի կողմից իրականացվող «Հայ-Ռուսական համալսարանի նոր մասնաշենքի շինարարության» ծրագրի մասին:
(Միքայել Մակարյան)

6. «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի կողմից իրականացվող «Հայ-Ռուսական համալսարանի մարզահամալիրի լողավազանի շինարարության ավարտի» ծրագրի մասին:
(Միքայել Մակարյան)

7. «ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամի կողմից իրականացվող «Դու մենակ չես» ծրագրի մասին:
(Մարտուն Հարությունյան)

### 8. Բարեգործական բեռների ներմուծման և բաշխման մասին
(Արման Բարխուդարյան)

8.1 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին **(N 3)**:

8.2 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ուղարկված բեռի ներմուծման ծրագրի մասին:



8.3 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ուղարկված բեռի ներմուծման ծրագրի մասին **(N 1)**:

8.4 Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռների ներմուծման ծրագրի մասին:

8.5 Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին **(N 2)**:

8.6 «Հայաստանի շախմատի ակադեմիա» հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

8.7 «Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռի ներմուծման և բաշխման ծրագրի մասին:

8.8 «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (SOAR)-Հայաստան» հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման և բաշխման ծրագրի մասին:

8.9 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի N Մ-267-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ):

### 9. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին
(Արման Բարխուդարյան)

9.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 28-ի N Մ-857-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստան» համահայկական հիմնադրամ):

9.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի N Մ-1068-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տաթևի վերածնունդ» հիմնադրամ):

9.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-086-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին **N 2** («Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամ):

9.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի N Մ-064-Ա որոշմամբ հաս-

տատված ծրագրին հարակից գործարքների մասին («Սեյվ դը չիլդրեն Ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչություն):

9.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի N Մ-1004-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Այբ» կրթական հիմնադրամ):

9.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 2-ի N Մ-792-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին (Հայկական կարմիր խաչի ընկերություն):

9.7 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի N Մ-044-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպություն):

9.8 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի N Մ-018-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):

9.9 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 13-ի N Մ-330-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Արմենիան Լայթհաուս» բարեգործական հիմնադրամ):

**10. Այլ հարցեր**

10.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի սեպտեմբերի 8-ի N Մ-805-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու մասին («Հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանության ազգային դաշինք» իրավաբանական անձանց միություն):

10.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի N Մ-018-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**փետրվարի 2017 թվականի N Մ - - Ա**
**քաղ. Երևան**

ԽԻ 2/1

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԴՐՈՒԹԻ ՇՐՋԱՆԻ ՔՅՈՒՐԱԹԱՂ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԵՎ 150 ՏԵՂԱՆՈՑ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՆ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի փետրվարի -ի N 01.1/80-2/ -17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի փետրվարի -ի N 02/14/ -17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի փետրվարի -ի N 06/3-8/ -17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 10,142,200 դրամ ընդհանուր արժողությամբ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութի շրջանի Քյուրաթաղ գյուղի համայնքային կենտրոնի և 150 տեղանոց հանդիսությունների տան կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՍՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2017 թվականի փետրվարի 6-ին կնքված N ԼՂ-Կ-01/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կահույքի պատրաստում և տեղափոխում՝ 10,142,200 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է**

**«Հայաստան» համահայկական**
**հիմնադրամի գործադիր տնօրեն**
**Արա Վարդանյան**

«07» փետրվարի 2017թ.

**«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութի շրջանի Քյուրաթաղ գյուղի համայնքային կենտրոնի և 150 տեղանոց հանդիսությունների տան կահավորում »**
**ԾՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ապահովել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութի շրջանի Քյուրաթաղ գյուղի հիմնադրամի կողմից կառուցած համայնքային կենտրոնը և 150 տեղանոց հանդիսությունների տունը անհրաժեշտ կահույքով |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ (ֆիզիկական և իրավաբանական անձիք) |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Լեռնային Ղարաբաղ, Հադրութի շրջան, Քյուրաթաղ գյուղ, սոցիալական բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 10.142.200,00 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութի շրջանի |

ԽԻ 2/1

| | | |
|---|---|---|
| | | Քյուրաթաղ գյուղի բնակիչները |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017թ փետրվարի 06-ից մինչեւ 2017թ. դեկտեմբերի 06-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութի շրջանի Քյուրաթաղ գյուղի համայնքային կենտրոնի և հանդիսությունների տան կահավորում 2017թ փետրվարի 06-ից մինչեւ 2017թ.դեկտեմբերի 06-ը ընկած ժամանակահատվածում, արժողությունը՝ 10.142.200,00 դրամ: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի Հավելված թիվ 1-ի ցանկի համաձայն գույքի պատրաստում, գնում, տեղափոխում եւ անհատույց տեղադրում՝ 10.142.200,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ կառավարության հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

Հ/2/1


# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
# ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am


01.1/80-2/2202-17
14.02.17

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
08.02.2017թ. N 15/15.1/2470-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութի շրջանի Քյուրաթաղ գյուղի համայնքային կենտրոնի և 150 տեղանոց հանդիսությունների տան կահավորում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
Հեռ. 011 910-437

034/5524-17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

ձ. 2/1

0010 Երևան, Վազգեն Սարգսյան 3/8, հեռ. 594 013
Էլ. փոստ suren.krmoyan@justice.am

№ 04/14/1799-17
«9» 02 2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ի կատարումն ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 8-ի 15/15.1/2470-17 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութի շրջանի Քյուրաթաղ գյուղի համայնքային կենտրոնի և 150 տեղանոց հանդիսությունների տան կահավորում» ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՍՈՒՐԵՆ ՔՐՄՈՅԱՆ

?????? ???????
Feb 8 2017 7:15 PM

Կատարող՝ Անդրանիկ Ռաշիդյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. (010) 59-41-29

035/4808-17

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

ձ. 2/1

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
հեռ. 060 544-303

0613-8/3938-17
9.02.17

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 08.02.2017թ. թիվ 15/15.1/2470-17 գրությանը կից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութի շրջանի Քյուրաթաղ գյուղի համայնքային կենտրոնի և 150 տեղանոց հանդիսությունների տան կահավորում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝ Վ. Միրումյան

ՀՎՍՀԿ, Ս. Բարսեղյան
հեռ. 060 544705

044/5011-17

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

փետրվարի 2017 թվականի N Մ- -Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳՐՔԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի փետրվարի -ի N 01.1/80-2/ -17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի փետրվարի -ի N 02/14/ -17, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2017 թվականի փետրվարի -ի N 03/07-1/ -17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի փետրվարի -ի N 06/3-8/ -17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող՝ 26,684,456 դրամ ընդհանուր արժողությամբ «Գրքերի բաշխում» ծրագիրը (կցվում է):

2. Հայաստանի մանուկների հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Լոռու, Տավուշի մարզպետներին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայաստանի մանուկներ բարեգործական հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի կողմից
Փետրվարի 2017

# Գ Ր Ք Ե Ր Ի  Բ Ա Շ Խ Ո Ւ Մ
բարեգործական ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Հայաստանի մանուկներ հիմնադրամը 2016 թվականի Հունվար ամսին «Penguin Random House" ՍՊԸ-ից (Պենգուին Ռենդըմ Հաուզ) ԱՄՆ, փաստացի ստացել է թվով 2998 հատ **ուսուցողական և գեղարվեստական գրքեր**: Ծրագրի նպատակն է ստացված գրքերը բաշխել Հայաստանի մանուկներ հիմնադրամի շահառու համարվող համայնքներում գործող ուսումնական պետական և ոչ պետական կազմակերպություններին: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագիրը բարեգործական որակելուց հետո հիմնադրամի կողմից կնքված հարակից գործարքները և ներմուծվող բեռները կստանան հնարավորություն ազատվելու ԱԱՀ-ից, օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից ինչը և կօգնի հիմնադրամին ավելի շատ ներդրումներ կատարել համայնքներում: Ներմուծվող բեռները կստանան օրենքով սահմանված հարկային և մաքսային արտոնություններ: |
| 3 | Բարեգործը | Հայաստանի մանուկներ հիմնադրամ, ՀՎՀՀ02569972, ՀՀ ք.Երևան 0001, Հյուսիսային պող 1, 8-րդ հարկ, 24 սենյակ |
| 4 | Ծրագիր կատարողը | Հայաստանի մանուկներ հիմնադրամ, ՀՎՀՀ02569972, ՀՀ ք.Երևան 0001, Հյուսիսային պող 1, 8-րդ հարկ, 24 սենյակ |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը - բնագավառը | ՀՀ Արմավիրի մարզի Գետաշեն, Ղալարիկ, Հացիկ, Քարակերտ, Լեռնագոգ, Ծենիկ, Վանանդ, Արագածոտն մարզի Արագածավան և Արտենի, Լոռու մարզի Աքորի, Արևածագ, Դեբետ, Դսեղ, Ձորագյուղ, Քարինջ, Մարց, Մեծ Այրում, Թումանյան և Սպիտակ, Շիրակի մարզի Բենիամին, Լանջիկ, Սառնաղբյուր, Տավուշի մարզի Բերդավան և Զորական, Սյունիքի մարզի Մեղրի, Լորի, Վաղատին, Գեղարքունիկի մարզի Լանջաղբյուր, Կոտայքի մարզի Հացավան համայնքներ: Բնագավառը - Կրթական: |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 26 684 456 /քսանվեց միլիոն վեց հարյուր ութսունչորս չորս հարյուր հիսունվեց/ ՀՀ դրամ առանց ԱԱՀ: |

| | | |
|---|---|---|
| 7 | Բարեգործություն ստացողը | Գետաշենի միջնակարգ դպրոց<br>Դալարիկի Յ. Յովհաննիսյանի անվ. N1 միջնակարգ դպրոց<br>Յացիկի Ավ. Բաղդասարյանի անվ. միջնակարգ դպրոց<br>Քարակերտի N1 միջնակարգ դպրոց<br>Քարակերտի 2-րդ միջնակարգ դպրոց<br>Լեռնագոգի Օ. Փակումեանի անվ. միջնակարգ դպրոց<br>Ծենիկի միջնակարգ դպրոց<br>Վանանդի միջնակարգ դպրոց<br>Արագածավանի թիվ 1 միջնակարգ դպրոց<br>Արագածավանի թիվ 2 միջնակարգ դպրոց<br>Արտենիի թիվ 1 միջնակարգ դպրոց<br>Արտենիի հիմնական դպրոց<br>Աբորու միջնակարգ դպրոց<br>Արևածագի միջնակարգ դպրոց<br>Դերեդի միջնակարգ դպրոց<br>Դսեղի Յ. Թումանյանի անվ. միջնակարգ դպրոց<br>Ձորագյուղի հիմնական դպրոց<br>Քարինջի միջնակարգ դպրոց<br>Մարցի միջնակարգ դպրոց<br>Մեծ Այրումի միջնակարգ դպրոց<br>Թումանյանի միջնակարգ դպրոց<br>Բենիամինի միջնակարգ դպրոց<br>Լանջիկի միջնակարգ դպրոց<br>Սառնաղբյուրի միջնակարգ դպրոց<br>Բերդավանի միջնակարգ դպրոց<br>Ձորականի միջնակարգ դպրոց<br>Վաղատինի միջնակարգ դպրոց<br>Սպիտակի Երիտասարդ մարդկանց քրիստոնեական ասոցիացիա ՅԿ<br>Մեղրիի թիվ 2 միջնակարգ դպրոց<br>Լոռի միջնակարգ դպրոց<br>Լանջաղբյուրի Վ. Ադամյանի անվան միջնակարգ դպրոց<br>Յացավանի միջնակարգ դպրոց<br>Քարակերտի համայնքային կենտրոն<br>Յամայնքային և երիտասարդական նախաձեռնությունների ակումբ |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.02.2017-01.04.2017 |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Գրքերը բաշխվելու են 2017 թվականի փետրվարի 1 ից մինչև 2017 թվականի ապրիլի 1-ը ընկած ժամանակահատվածում: Բաշխման գործընթացը կազմակերպելու է Յայաստանի մանուկներ հիմնադրամը իր աշխատակիցների օգնությամբ համաձայն ծրագրի իրականացման վայրերի: Այլ միջոցառումներ չեն նախատեսվում: |



| | | |
|---|---|---|
| 10 | Ձեռք բերվելիք /ներմուծվող/ ապրանքներ, ծառայությունների և աշխատանքների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Ծրագրի շրջանակներում ապրանքների ներմուծում կամ ձեռքբերում չի նախատեսվում: |
| 11 | Կազմակերպչական ծախսեր | Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12 | Յամագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցել ՅՅ նախարարությունների, մարզպետարանների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների, բանկերի և միջազգային կազմակերպությունների հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողություն իրականացվելու է ԱՄՆ Children of Armenia Fund հիմնադրամի, ՅՅ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ներկայացուցիչների և անկախ աուդիտորական կազմակերպության կողմից: |

**Իննեսա Գրիգորյան**

**Գործադիր տնօրեն Ժ/պ**

**Յայաստանի մանուկներ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

01/1/80-2/1975-17
9.02.17

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
06.02.2017թ. N 15/15.1/2152-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ուսումնասիրելով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի մանուկներ հիմնադրամի կողմից իրականացվող «Գրքերի բաշխում» ծրագրի մասին» որոշման նախագիծը՝ հայտնում ենք հետևյալը.

- առաջարկում ենք որոշման նախագծի 3-րդ կետում ներառել համապատասխան մարզպետարաններին,
- լրամշակման և վերախմբագրման կարիք ունի ներկայացված ծրագիրը, քանզի ծրագրից և կից ներկայացված փաստաթղթերից պարզ չէ ներմուծվել են արդյոք շուրջ մեկ տարի առաջ հատկացված բեռները, նախատեսվող ծրագրով կոնկրետ որ գործարքների մասով են նախատեսվում հարկային արտոնությունների կիրառում, ինչպես նաև անհասկանալի է բեռի բաշխման ցանկն ու դրանց համապատասխան արժեքները:

Ելնելով վերոգրյալից հայտնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը վերջնական դիրքորոշում կարող է հայտնել լրացուցիչ պարզաբանումներ և ծրագրում որոշակի փոփոխություններ կատարելուց հետո:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան, հեռ. 011 910-437

01/5032-17

1

Գրքերի բաշխման ցուցակ

| Հ/Հ | Կազմակերպության անվանումը | Eyewitness Space Exploration | Rocks and Minerals | Rain Forest Explorer | Mega Machines | Animals | Volcano & Earthquake | The Great Panda Tale | Ancient Greece | Battle at the Castle | African Adventure | Little Dolphin | Human Body | Gandhi | Bugs Hide and Seek | Dinosaurs | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Գետաշենի միջնակարգ դպրոց | 5 | 6 | 6 | 4 | 3 | 4 | 4 | 5 | 5 | 7 | 4 | 6 | 5 | 4 | 3 | 71 |
| 2 | Դալարիկի Հ. Հովհաննիսյանի անվ. N1 միջնակարգ դպրոց | 8 | 8 | 9 | 8 | 5 | 7 | 7 | 8 | 7 | 7 | 7 | 9 | 8 | 7 | 5 | 110 |
| 3 | Հացիկի Ալ. Բաղդասարյանի անվ. միջնակարգ դպրոց | 6 | 7 | 8 | 6 | 4 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 8 | 6 | 6 | 4 | 91 |
| 4 | Քարակերտի N1 միջնակարգ դպրոց | 6 | 7 | 8 | 6 | 4 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 8 | 6 | 6 | 4 | 91 |
| 5 | Քարակերտի 2-րդ միջնակարգ դպրոց | 7 | 8 | 9 | 7 | 5 | 7 | 7 | 7 | 6 | 7 | 7 | 9 | 7 | 7 | 4 | 104 |
| 6 | Լեռնագոգի Օ. Փակուճյանի անվ. միջնակարգ դպրոց | 6 | 7 | 8 | 6 | 4 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 8 | 6 | 6 | 4 | 91 |
| 7 | Շենիկի միջնակարգ դպրոց | 4 | 5 | 6 | 4 | 3 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 5 | 4 | 4 | 3 | 62 |
| 8 | Վանանդի միջնակարգ դպրոց | 4 | 5 | 5 | 3 | 2 | 3 | 3 | 4 | 4 | 3 | 3 | 5 | 4 | 3 | 2 | 53 |
| 9 | Արագածավանի թիվ 1 միջնակարգ դպրոց | 9 | 8 | 9 | 8 | 5 | 8 | 8 | 8 | 7 | 7 | 7 | 8 | 8 | 5 | 4 | 109 |
| 10 | Արագածավանի թիվ 2 միջնակարգ դպրոց | 7 | 7 | 8 | 6 | 4 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 7 | 6 | 6 | 4 | 91 |
| 11 | Արտենիի թիվ 1 միջնակարգ դպրոց | 7 | 8 | 9 | 7 | 4 | 7 | 7 | 7 | 6 | 7 | 7 | 9 | 7 | 7 | 4 | 103 |
| 12 | Արտենիի հիմնական դպրոց | 4 | 5 | 6 | 3 | 2 | 3 | 3 | 4 | 4 | 3 | 3 | 5 | 4 | 3 | 2 | 54 |
| 13 | Աշնակի միջնակարգ դպրոց | 6 | 7 | 8 | 6 | 4 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 4 | 6 | 3 | 4 | 84 |
| 14 | Արևածագի միջնակարգ դպրոց | 6 | 7 | 8 | 6 | 4 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 4 | 6 | 3 | 4 | 84 |
| 15 | Դեբեդի միջնակարգ դպրոց | 4 | 5 | 6 | 3 | 2 | 3 | 3 | 4 | 4 | 3 | 3 | 2 | 4 | 1 | 2 | 49 |
| 16 | Դսեղի Հ. Թումանյանի անվ. միջնակարգ դպրոց | 5 | 6 | 6 | 4 | 3 | 4 | 4 | 5 | 5 | 4 | 4 | 3 | 5 | 2 | 3 | 63 |
| 17 | Ձորագյուղի հիմնական դպրոց | 4 | 5 | 5 | 3 | 2 | 3 | 3 | 4 | 4 | 3 | 3 | 2 | 4 | 1 | 2 | 48 |
| 18 | Քարինջի միջնակարգ դպրոց | 4 | 5 | 5 | 3 | 2 | 3 | 3 | 4 | 4 | 3 | 3 | 2 | 4 | 1 | 2 | 48 |
| 19 | Մարցի միջնակարգ դպրոց | 4 | 5 | 5 | 3 | 2 | 3 | 3 | 4 | 4 | 3 | 3 | 2 | 4 | 1 | 2 | 48 |
| 20 | Մեծ Այրումի միջնակարգ դպրոց | 4 | 5 | 6 | 4 | 3 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 2 | 4 | 2 | 3 | 57 |
| 21 | Թումանյանի միջնակարգ դպրոց | 4 | 5 | 6 | 4 | 3 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 2 | 4 | 2 | 3 | 57 |
| 22 | Թեղուտի միջնակարգ դպրոց | 4 | 5 | 5 | 3 | 2 | 3 | 3 | 4 | 4 | 3 | 3 | 5 | 4 | 3 | 2 | 53 |
| 23 | Լանջիկի միջնակարգ դպրոց | 4 | 5 | 6 | 4 | 3 | 4 | 4 | 3 | 4 | 4 | 4 | 5 | 4 | 4 | 3 | 61 |
| 24 | Սառնաղբյուրի միջնակարգ դպրոց | 7 | 8 | 9 | 7 | 4 | 7 | 7 | 7 | 6 | 7 | 7 | 5 | 7 | 4 | 4 | 96 |
| 25 | Բերդավանի միջնակարգ դպրոց | 7 | 8 | 9 | 7 | 5 | 7 | 7 | 7 | 7 | 6 | 6 | 6 | 7 | 4 | 4 | 97 |
| 26 | Ձորականի միջնակարգ դպրոց | 4 | 5 | 5 | 3 | 2 | 3 | 3 | 4 | 4 | 3 | 3 | 2 | 4 | 1 | 2 | 48 |
| 27 | Վ[illegible] միջնակարգ դպրոց | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 75 |
| 28 | Սպիտակի Երիտասարդ մարդկանց քրիստոնեական ասոցիացիա ՀԿ | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 75 |
| 29 | Մեղրիի թիվ 2 միջնակարգ դպրոց | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 75 |
| 30 | Լոռի միջնակարգ դպրոց | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 75 |
| 31 | Լանջաղբյուրի Վ. Ադամյանի անվան միջնակարգ դպրոց | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 120 |
| 32 | Հացավանի միջնակարգ դպրոց | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 75 |
| 33 | Քարակերտի համայնքային կենտրոն | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 30 |
| 34 | Համայնքային և երիտասարդական նախաձեռնությունների ակումբ | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 15 |
| | Ընդամենը բաշխման ենթակա | 176 | 198 | 216 | 164 | 122 | 163 | 163 | 173 | 169 | 164 | 161 | 169 | 174 | 132 | 119 | 2463 |
| | Պահուստ | 23 | 53 | 39 | 35 | 27 | 69 | 36 | 46 | 30 | 35 | 37 | 22 | 44 | 28 | 63 | 587 |
| | Ընդամենը | 198 | 246 | 252 | 196 | 146 | 228 | 196 | 215 | 196 | 196 | 195 | 188 | 214 | 156 | 178 | 2998 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

մ. 2/2

0078 Երևան, Վ.Սարգսյան 3/8, հեռ. 594013
էլ. փոստ suren.krmoyan@justice.am

№ 4/14/1663-17
«7» 02 2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ի կատարումն ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 3-ի 15/15.1/2152-17 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ «Հայաստանի մանուկների» հիմնադրամի կողմից իրականացվող «Գրքերի բաշխում» ծրագրի 5-րդ կետում ծրագրի իրականացման բնագավառը նշված է բարեգործություն: Այս կապակցությամբ անհրաժեշտ է խմբագրել հիշյալ դրույթները՝ հստակ նշելով ծրագրի իրականացման բնագավառը՝ նկատի ունենալով ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

?????????????
Feb 7 2017 3:35 PM

ՍՈՒՐԵՆ ՔՐՄՈՅԱՆ

Կատարող՝ Ալլա Ստեփանյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. (010) 594-115

035/4616-17

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ
РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND OF SCIENCE
**HEAD OF STAFF**

մ. 2/2

**0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: 58 02 42 ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43**
**0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan, E-mail: headofstaff@edu.am, ww.edu.am**

N 04/07-1/1627-17 10.02 2017թ.

*ՀՀ կառավարության բարեգործական*
*ծրագրերի համակարգման հանձնաժողովի*
*նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին*

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր սույն թվականի փետրվարի 3-ի № 15/15.1/2152-17 գրության՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի մանուկներ հիմնադրամի կողմից իրականացվող «Գրքերի բաշխում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ, առաջարկում ենք՝ ՀՀ կրթության և գիտության նախարարությանը տրամադրել տեղեկատվություն բաշխման ցանկում նշված գրքերի բովանդակության մասին:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**

**Ն.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*կատ. Ն.Սահակյան*
*հեռ. 524777*

031/5130-17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

ձր 2/2

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
հեռ. 060 544-303

06/3-8/4030-17
10.02.17

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 03.02.2017թ. թիվ 15/15.1/2152-17 գրությանը կից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գրքերի բաշխում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ.

Ծրագրի 1-ին կետի համաձայն՝ ուսուցողական և գեղարվեստական գրքերը Հայաստանի մանուկների հիմնադրամին է տրամադրել «Penguin Random House» ՍՊԸ-ն, որի ընդհանուր արժեքը կազմում է ծրագրով նախատեսված ամբողջ բյուջեն, մինչդեռ ծրագրի 3-րդ կետում, որպես բարեգործ, նշված է «Չիլդրեն Օֆ Արմենիա Ֆանդ» կազմակերպությունը, որի առնչությունը՝ որպես բարեգործ, տվյալ ծրագրի համար անհասկանալի է: Միաժամանակ, ՀՀ կառավարության 16.01.2003թ. «Բարեգործական ծրագրերի մասին» N66-Ն որոշմամբ հաստատված՝ «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգ»-ի 5-րդ կետի համաձայն՝ հարկային արտոնությունների ստացման նկատառումով բարեգործական կարող են որակվել միայն այն ծրագրերը, որոնք *իրականացվում են օտարերկրյա պետությունների, միջազգային միջկառավարական (միջպետական) կազմակերպությունների, միջազգային, օտարերկրյա և Հայաստանի Հանրապետության հասարակական (ներառյալ բարեգործական), կրոնական ու նմանատիպ բնույթի այլ կազմակերպությունների, առանձին բարերարների կողմից և նրանց ֆինանսական կամ այլ միջոցների հաշվին*: Այսինքն տվյալ դեպքում, ***առևտրային կազմակերպություն համարվող*** «Penguin Random House» ՍՊԸ-ի կողմից հատկացվող միջոցների (գրքերի) հաշվին իրականացվող ծրագիրը հարկային արտոնությունների ստացման նկատառումով չի կարող որակվել բարեգործական:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ ներկայացված որոշման նախագծի բարեգործական որակումը համարում եմ ոչ նպատակահարմար:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

ՀՎՀԿ, Ա. Բարսեղյան
հեռ. 060 544705

044/956-17

---

COAF

ՅԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐ ՅԻՄՆԱԴՐԱՄ
CHILDREN OF ARMENIA FUND

14 փետրվարի 2017 թ

ձր 2/2
COAF 063

ՅՅ կառավարության բարեգործական ծրագրերը
համակարգող հանձնաժողովի նախագահ
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

ՅՅ կառավարության առընթեր պետական
եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ
պարոն Վ. Միրումյանին

ՅՅ ֆինանսների նախարարի առաջին
տեղակալ պարոն Ա. Ջանջուղազյանին

Յարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ի պատասխան պարոն Վ. Միրումյանի և Ա. Ջանջուղազյանի դիտողությունների, հայտնում եմ, որ «Գրքերի բաշխում» բարեգործական ծրագրի հովանավոր և կատարող է համարվում Յայաստանի մանուկներ հիմնադրամը: «Penguin Random House» ՍՊԸ-ն նշված գրքերը նվիրաբերել է Յայաստանի մանուկներ հիմնադրամին 2016 թվականի հունվար ամսին: Պետք է նշեմ, որ ծրագրի հայտով հիմնադրամը չի ցանկանում այս գրքերը ազատել մաքսային վճարներից, տուրքերից ու ԱԱՅ-ից որոնք առաջանում են ներմուծման ընթացքում: Այս գրքերը պատկանում են Յայաստանի մանուկներ հիմնադրամին և ներմուծման ժամանակ «Penguin Random House» ՍՊԸ-ն վճարել է օրենքով նախատեսված բոլոր հարկերը: Սակայն Յայաստանի մանուկներ հիմնադրամը ցանկանում է գրքերը նվիրաբերել մի շարք կրթական հաստատությունների և օտարման ժամանակ առաջանում է ԱԱՅ: Այս ծրագրի նպատակն է օտարման ժամանակ առաջացած ԱԱՅ-ից ազատումը: Կից ներկայացված են ներմուծման փաստաթղթերը, բաշխման ցանկը և այլն, համաձայն որոնց գրքերը գնահատվել և մաքսազերծվել են:

Խնդրում եմ ծրագիրը համարել բարեգործական և ազատել ԱԱՅ-ից:

Յարգանքով՝

Ինեսա Գրիգորյան
Գործադիր տնօրենի ժ/պ

239

094-5649
14 02 17 թ.

www.coafkids.org

ՅՅ, ք. Երևան 0001, Յյուսիսային պողոտա 1,
8-րդ հարկ, 24 սենյակ
Յեռ.՝ (+374 10) 50 20 76, 53 34 12
Ֆաքս՝ (+374 10) 50 20 76

1 Northern Ave., 8th Floor, Suite 24
Yerevan 0001, RA
Tel: (+374 10) 50 20 76, 53 34 12

ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գրքերի բաշխում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարություն - 9.02.17, N 01.1/80-2/1975-17 | |
| Առաջարկում ենք որոշման նախագծի 3-րդ կետում ներառել համապատասխան մարզպետարաններին,<br>Լրամշակման և վերախմբագրման կարիք ունի ներկայացված ծրագիրը, քանզի ծրագրից և կից ներկայացված փաստաթղթերից պարզ չէ ներմուծվել են արդյոք շուրջ մեկ տարի առաջ հատկացված բեռները, նախատեսվող ծրագրով կոնկրետ որ գործարքների մասով են նախատեսվում հարկային արտոնությունների կիրառում, ինչպես նաև անհասկանալի է բեռի բաշխման ցանկն ու դրանց համապատասխան արժեքները | Կցված են կազմակերպության պարզաբանումը և լրամշակված ծրագիրը |
| ՀՀ արդարադատության նախարարություն - 7.02.17, N 4/14/1663-17 | |
| Անհրաժեշտ է խմբագրել հիշյալ դրույթները՝ հստակ նշելով ծրագրի իրականացման բնագավառը | Դիտողությունը ընդունվել է, կցված է լրամշակված ծրագիրը |
| ՀՀ կրթության և գիտության նախարարություն - 10.02.17, N 04/07-1/1627-17 | |
| Առաջարկում ենք՝ ՀՀ կրթության և գիտության նախարարությանը տրամադրել տեղեկատվություն բաշխման ցանկում նշված գրքերի բովանդակության մասին | Կցված է կազմակերպության պարզաբանումը |
| ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե - 10.02.17, N 06/3-8/4030-17 | |
| Ծրագրի 1-ին կետի համաձայն՝ ուսուցողական և գեղարվեստական գրքերը Հայաստանի մանուկների հիմնադրամին է տրամադրել «Penguin Random House» ՍՊԸ-ն, որի ընդհանուր արժեքը կազմում է ծրագրով նախատեսված ամբողջ բյուջեն, մինչդեռ ծրագրի 3-րդ կետում, որպես բարեգործ, նշված է «Չիլդրեն Օֆ Արմենիա Ֆանդ» կազմակերպությունը, որի առնչությունը՝ որպես բարեգործ, տվյալ ծրագրի համար անհասկանալի է: Միաժամանակ, ՀՀ կառավարության 16.01.2003թ. «Բարեգործական ծրագրերի մասին» N66-Ն որոշմամբ հաստատված՝ «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգ»-ի 5-րդ կետի համաձայն՝ հարկային արտոնությունների ստացման նկատառումով բարեգործական կարող են որակվել միայն այն ծրագրերը, որոնք *իրականացվում են օտարերկրյա պետությունների, միջազգային միջկառավարական (միջպետական) կազմակերպությունների, միջազգային, օտարերկրյա և Հայաստանի Հանրապետության հասարակական (ներառյալ բարեգործական), կրոնական ու նմանատիպ բնույթի այլ կազմակերպությունների, առանձին բարերարների կողմից և նրանց ֆինանսական կամ այլ միջոցների հաշվին*: Այսինքն տվյալ դեպքում, ***առևտրային կազմակերպություն համարվող*** «Penguin Random House» ՍՊԸ-ի կողմից հատկացվող միջոցների (գրքերի) հաշվին իրականացվող ծրագիրը հարկային արտոնությունների ստացման նկատառումով չի կարող որակվել բարեգործական:<br>Հաշվի առնելով վերոնշյալը՝ ներկայացված որոշման նախագծի բարեգործական որակումը համարում եմ ոչ նպատակահարմար | Կցված է կազմակերպության պարզաբանումը |

**ՆԱԽԱԳԻԾ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՐ-2/3

փետրվարի 2017 թվականի N Մ - - Ա
քաղ. Երևան

# «ԴԻԼԻՋԱՆ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի փետրվարի -ի N 01.1/80-2/-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի փետրվարի -ի N 02/14/-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի փետրվարի -ի N 06/3-8/-17 և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի 2017 թվականի փետրվարի -ի N 01/21.1/-17 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական ոչակել «Դիլիջան Դեվելոփմենթ» հիմնադրամի (Հայաստանի Հանրապետության, Տավուշի մարզ, քաղ. Դիլիջան, Գետափնյան 7, ՀՎՀՀ 07618624) կողմից իրականացվող՝ 2,400,000,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Դիլիջան համայնքում եկեղեցական համալիրի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. «Դիլիջան Դեվելոփմենթ» հիմնադրամին՝

1) սույն որոշման առաջին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԴԻԼԻՋԱՆ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
Հոգաբարձուների խորհրդի 27.01.2017 թվականի
թիվ 01-17 որոշմամբ
ՏՆՕՐԵՆ Ա. ՂԱՎԹՅԱՆ

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

| | | |
|---|---|---|
| 1 | **Ծրագրի նպատակ** | Դիլիջան համայնքում Հայ առաքելական եկեղեցական համալիրի կառուցում և առաջին փուլի մեկնարկ |
| 2 | **Ծրագրիը բարեգործական ոչակելու նպատակ** | Հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների մասով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված արտոնություններ ստանալ |
| 3 | **Բարեգործներ** | Սույն ծրագիրը հիմնականում ֆինանսավորվում է նվիրատուների և նվիրաբերողների կառավարների կողմից, ներառյալ, սակայն չսահմանափակվելով՝ <br> **Ռուբեն Վարդանյան և Վերոնիկա Զոնաբենդ, ՌԴ-ՀՀ հիմնադրամ** <br> **«Ավրորա Ֆենիքս Ֆաունդեյշն Ֆոր Ռսլենսեներ (ԱՖՖՌ) ա.փ.ը.» ու** ստացողների կազմակերպություն, **Գագիկ Ադիբեկյան** <br> **ԴԻԼԻՋԱՆ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹ հիմնադրամ** <br> **ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ Բարեգործական Հիմնադրամ** <br> **Դիլիջան համայնք** <br> **Մաքսիմ Աբրայանց** |
| 4 | **Ծրագրիը կատարող** | Սույն ծրագիրն իրականացվում է ԴԻԼԻՋԱՆ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹ հիմնադրամի կողմից: <br> Իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք. Դիլիջան 3903, Գետափնյան 7 <br> Պետ. ռեգիստրի վկայական՝ 03Ա1031574, գրանցման թիվ՝ 222.160.881574 |

ԱՐ-2/3

| | | |
|---|---|---|
| | | ՀՎՀՀ 07618624<br>Գործունեության իրականացման հասցե՝ ՀՀ, ք. Դիլիջան 3901, Մյասնիկյան 63 |
| 5 | **Ծրագրի իրականացման վայր և բնագավառ** | Ծրագիրն իրականացման վայրն է՝ ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքային բնակավայրի Գետափնյա փողոց 3/2 և 3/11: Բարեգործական ծրագրի բնագավառն է՝ հոգևոր-դաստիարակչական: |
| 6 | **Ծրագրի բյուջե** | Բարեգործական ծրագրի նպատակների իրականացման համար 2017թ" մարտի 1-ից-2020թ. դեկտեմբերի 31-ը, եկեղեցու կառուցման համար անհրաժեշտ ֆինանսավորումը կազմում է 2,400,000,000 ՀՀ դրամ:<br>Ծրագրի իրականացումը բաժանվել է 3 հիմնական փուլերի, այն է՝<br>1. Նախագծային, նախապատրաստական և հիմնային աշխատանքների իրականացում<br>2. Ընդհանուր շինարարական աշխատանքների իրականացում,<br>3. Հարդարման և տարածքի բարեկարգման աշխատանքներ: |
| 7 | **Բարեգործություն ստացող** | Տավուշի թեմ, Դիլիջան համայնք, զբոսաշրջիկներ, այցելուներ: |
| 8 | **Ծրագրի իրականացման տևողություն** | Ծրագիրն իրականացվելու է 2017թ, մարտի 1-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը: |
| 9 | **Միջոցառումների նկարագրություն և ժամկետներ, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալ** | Ծրագիրն իրականացվում է 3 փուլերով:<br>Ծրագրով նախատեսված ժամանակաշրջանում կատարվելու են հետևյալ միջոցառումները՝<br>1. Փուլ 1 Նախագծային, նախապատրաստական և հիմնային աշխատանքների իրականացում 01/03/2017թ" մինչև 31/12/2017թ": |

| # | Միջոցառման նկարագրությունը | Ֆինանսական միջոցների ծավալը (հազ. ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1. | Էսքիզային նախագծի մշակում, Ինժեներական հետազոտություններ, Աշխատանքային նախագծի մշակում, փորձաքննությունների, կազմակերպում, համաձայնեցում և կազմակերպչական այլ աշխատանքներ | 200,000,000 |
| 2 | Պայմանագրերի կնքում կապալառուի և ծառայություններ մատուցող այլ անձանց հետ | 110,000,000 |
| 3 | Շինարարական նյութերի ձեռքբերում | 120,000,000 |
| 4 | Չնախատեսված այլ ծախսեր | 20,000,000 |
| | **Ընդամենը** | **450,000,000** |

Փուլ 2 Ընդհանուր շինարարական աշխատանքների իրականացում 01/04/2017թ մինչև 30/06/2020թ":

| # | Միջոցառման նկարագրությունը | Ֆինանսական միջոցների ծավալը (հազ. ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1. | Պայմանագրերի կնքում կապալառուի և ծառայություններ մատուցող անձանց հետ | 400,000,000 |
| 2. | Շինարարական նյութերի ձեռքբերում ներքին շուկայից | 1,000,000,000 |
| 3. | Շինարարական նյութերի, ապրանքների և ծառայությունների ներմուծում | 200,000,000 |
| 4. | Չնախատեսված այլ ծախսեր | 50,000,000 |
| | **Ընդամենը** | 1,650,000,000 |

Փուլ 3 Ներքին հարդարման և տարածքի բարեկարգման աշխատանքներ, ժամկետ՝ 01/01/2018թ մինչև 31/12/2020թ

| # | Միջոցառման նկարագրությունը | Ֆինանսական միջոցների ծավալը (հազ. ՀՀ դրամ) |
|---|---|---|